ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՌՈՒԲԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀԳՊԱ ասպիրանտ

Համառոտ

Աշտարակ քաղաքը Հայաստանի Հանրապետության կարևոր պատմական բնակավայրերից է: Նրա զարգացման համար առանցքային նշանակություն ունի հուշարձանների պահպանությունն ու դրանց միջավայրային կազմակերպումը: Այդ առումով ըստ հուշարձանացանկի, գլխավոր հատակագծի վրա ամրագրվել են հուշարձանները, խմբավորվել և օպտիմալ կարգով գոտևորվել են՝ հիմքում ունենալով դրանց տարածքի կազմակերպման դիզայներական հայեցակարգը:

Բանալի բառեր. *Աշտարակ, հուշարձան, եկեղեցի, գոտևորում, կազմակերպում*

Աշտարակ քաղաքը Հայաստանի փոքր պատմական քաղաքներից է, որն ուշագրավ է հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Աշտարակ քաղաքը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, որը հնում եղել է Այրարատ նահանգի Արագածոտն գավառի գյուղերից մեկը: Աշտարակի ստեղծման, նրա հինավուրց լինելու մասին կան լոկ հիշատակումներ (Աշտարակը Հայաստանի հնագույն գյուղերից մեկն է: Նրա գոյության սկիզբը կորչում է խորին հնության մեջ: Ակադեմիկոս Ն. Մառի ասելով՝ Ծիրանավոր եկեղեցու տեղում, հին ժամանակները եղել է Վիշապի-Աշտարակ-Աժդահակի կամ Շտեկի պաշտամունքի մի տաճար, որ հետո, քրիստոնեության օրոք, վերածվել է մի հնագույն տիպարի բազիլիկի: Տաճարի մոտ, ինչպես հայոց վանքերից ու եկեղեցիներից շատերի մոտ, հետագայում գոյացել է գյուղ, որ հնագույն սրբության անունով կոչվել է Աշտարակ)[1]: Բնակավայրի մասին պատմական ամենահին տեղեկությունը տալիս է 10-րդ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացին՝ «Պատմություն Տիեզերական» աշխատությունում[2]:

1 Երվանդ Շահազիզ, Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 38-39:

2 Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, երկրորդ հրատ., Երևան, 2000, էջ 126:

Քաղաքում պատմամշակութային հուշարձաններն օրգանապես միահյուսված են ներկայիս քաղաքի կառուցապատման համատեքստին: Դրանք մինչև օրս ուսումնասիրվել են ճարտարապետական և զբոսաշրջության համակարգման տեսանկյունից[1]: Իսկ դրանց միջավայրի կազմակերպման խնդիրների լուծումը դեռևս առջևում է:

Հոդվածի նպատակն է՝ կատարել Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների համակարգումը և նախապատրաստումը հետազոտման համար: Գիտական խնդիրներ են պատմամշակութային հուշարձանների ցանկի բնութագրումն ու նպատակահարմար խմբավորումը՝ համաձայն դրանց միջավայրային առանձնահատկությունների:

Աշտարակի պատմամշակութային հուշարձանների ցանկի համաձայն՝ քաղաքում և նրա տարածքում ներկայումս գոյություն ունի 35 հուշարձան, ներառյալ՝ Մուղնիի տարածքը[2]: Դրանք ցուցակագրվել են՝ ըստ հուշարձանների տեսակների: Սակայն, խնդրո առարկա հուշարձանների տարածքների կազմակերպմանը ճանաչողական բնույթ տալու համար անհրաժեշտ է դրանք խմբավորել տարածքային ընդհանրությամբ՝ մասնավորելով դրանց պատմական ժամանակաշրջանի պատկանելությունը:

Ա. Նախնադարյան հուշարձաններ

1) Վերին Նավեր քարեդարյան բնակավայրի տարածքը (6-5-րդ հազարամյակներ, ըստ պետական ցանկի, հուշարձան 33, այսուհետև՝ Հ-33):

2) «Խոջաբաղեր» դամբարանադաշտը և հնձանների համալիրը (2-րդ և 1-ին հազարամյակներ, Հ-14) : Տարածքում կա նաև 4-13-րդ դարերի 4 հնձան (Հ- 34):

4) Ուլատիտիկ բնակավայրը՝ Քասաղի կիրճի ձախ ափին (4-5 րդ դդ, Հ-1):

5) Մայր առու ջրանցքը (ուրարտական կառույց, Ք.ա. 8-7-րդ դարեր, Հ- 29):

---

1 Աշտարակի քաղաքապետարանի հետևյալ փաստաթղթերը՝ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծ՝ տեքստային մաս, գլուխ երկու, էջ՝ 89-92, գլուխ երեք, էջ՝ 190-191:

2 Վավերագիր՝ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքային համայնքի (բնակավայր)՝ տեքստային մաս, հավելված 3, պետական ցուցակ, էջ 242-245:

Բ. Միջնադարյան և նոր ու արդի շրջանի պատմամշակութային հուշարձանները քաղաքում ավելի բազմազան են՝ հետևյալ ժամանակագրական տվյալներով

6) Մուղնիից դեպի արևմուտք են գտնվում միջնադարյան քարայր կացարանները (Հ-35): Նույն տարածքի վրա կա նաև նահատակի դամբարան (1751 թ., Հ-30)[1]:

7) Վաղ միջնադարյան հուշարձաններ են՝ Ծիրանավոր եկեղեցին (5-րդ դ., Հ-16), Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին (7-րդ դ., Հ- 15):

8) Ձարգացած միջնադարյան հուշարձաններ են՝ Սպիտակավոր եկեղեցին (13-14 դդ., Հ-19), Ս. Մարիանե եկեղեցին՝ (1281 թ., Հ-17), Ս. Սարգիս եկեղեցին (13-րդ դ., վերակառուցվել է 1985 թ., Հ-18), Աշտարակի հին կամուրջը (10-րդ դ., Հ-20):

9) Ուշ միջնադարյան հուշարձաններ, որոնք հիմնականում ճարտարագիտական և կոմունալ կառուցվածքներ են, ինչպես՝ Աշտարակի նոր կամուրջը (1664 թ., Հ-21):

10) Նոր ժամանակաշրջանի հուշարձաններ, որոնք հիմնականում ժողովրդական բնակելի տան օրինակներ են: Այդ թվում են՝ Պերճ Պոոշյանի տուն-թանգարանը (19-րդ դ., Հ-31), Թաթոսենց Թա-թոյի բնակելի տունը (Սաժումյան 1, 1837 թ., Հ-10), անհայտ պատկանելության բնակելի տունը (Աբովյան 22, 1888 թ., Հ-3), բժիշկ Սանդրոյի բնակելի տունը (Ալազանի 19-23, 19-րդ դ. վերջ, Հ-4), Եսայու բնակելի տունը (Ղափանցյան 14, 19-րդ դ. վերջ, Հ-7), անհայտ պատկանելության բնակելի տուն (Ղափանցյան 18, 19-րդ դ. վերջ, Հ-8), Հաջի աղայի բնակելի տունը (Սաժումյան 12, 1895 թ., Հ-11), Բեգլարենց բնակելի տունը (Սաժումյան 34, 1896 թ., Հ- 12), Կոկոլենց Աթոյի բնակելի տունը (Էմին Հակոբյան 2, 1904 թ., Հ-6), Վարդազարենց բնակելի տունը (Ներսես Աշտարակեցու հրապարակ, 1910 թ., Հ-5), Միրեկանի բնակելի տունը (Ղափանցյան 20, 20-րդ դ. սկիզբ, Հ-9): Այս ժամանակներին են պատկանում նաև Աշտարակի ջրաղացները (Աբովյան 2, 19-րդ դ. վերջ, Հ- 28.), քաղաքի հին բաղնիքը (1900 թ., Հ- 2), հնձանները (19-րդ դ.ր, Հ- 22 և 23):

11) Արդի ժամանակաշրջանի հուշարձանները, բացի Աշտարակի քաղաքային այգուց (1965 թ.) և մշակույթի տնից (1950 թ.), հիմնականում երախտավորների տուն-թանգարաններ կամ հուշասյուներ են: Ինչպես՝ Նորայր Սիսակյանի տուն-թանգարանը (1987 թ., Հ-26), Արտեմի

1 Սա տարբեր ժամանակաշրջանների հուշարձաններ է ընդգրկում:

Այվազյանի հուշայունը (1990 թ., Հ-24), Երկրորդ աշխարհամարտի զոհերի հուշարձանը (աղբյուր) (1974 թ., Հ-25), քաղաքամերձ Վան-Վասպուրականի ճակատամարտի հուշարձանը (1980 թ., Հ-27), Ներսես Աշտարակեցու հուշարձանը (2010 թ., դեռևս ցուցակում չի ընդգրկվել):

12) Աշտարակը նշանավոր է հին գերեզմանատարածքներով, որոնք ունեն մեմորիալ կոթողներ, խաչքարեր և տապանաքարեր: Դրանք հիմնականում ընդգրկված են հին գերեզմանատան տարածքում (Հ-13), ինչպես նաև եկեղեցիների տարածքի վրա: Ընդհանուր առմամբ, դրանցում հաշվառված են 8 կոթող, 31 խաչքար և 4 տապանաքար[1]:

Աշտարակ քաղաքի տարածքի հուշարձանները վերաբերում են հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններին (տես՝ գծ.1): Ակնհայտ է, որ նախնադարյան հուշարձանները տեղաբաշխված են քաղաքի հյուսիսային արտաքին պարագծով՝ տարածվելով դեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք: Դրանց մեջտեղում հյուսիսից հարավ գծային հաջորդականությամբ տարածվում են միջնադարյան և նոր ու արդի ժամանակների հուշարձանները՝ Մուղնի գյուղը (ներկայումս՝ Աշտարակի թաղամաս), քաղաքի կորիզը, որ ընդգրկում է բնակավայրի հրապարակն ու քաղաքային այգին, Ս. Կարմրավորը, կենտրոնական և բերդի թաղամասերը:

Մուղնիի տարածքը իր խառը հուշարձաններով՝ որպես ինքնուրույն միավոր, առանձին գոտևորման և, համապատասխանաբար, հուշարձանների ուրույն տարածքների կազմակերպման միջոցառումների անհրաժեշտություն ունի, որոնց գլխավորը ուշ միջնադարյան Ս.Գևորգ

1 Տես՝ Աշտարակի հուշարձանացանկի 13.1-13.22 , 15.1.1-15.1.16, 16.1-16.7, 17.1 և 17.2 , 18.1-18.7 համարները: Դրանք բովանդակում են հետևյալ կոթողները կամ ճարտարապետական փոքր ձևերը՝ գերեզմանոցի տարածքի խաչքարերը. խաչքար (9-10-րդ դդ, գտնվում է քաղաքային հին գերեզմանոցի հարավային մասում), խաչքար (11-12-րդ դդ, Ա. Խաչատրյանի հողամասում, 13-րդ դ. խաչքարեր, (որմնափակ են, վերականգնվել են 1954թ., ճարտարապետ՝ Շ. Ազատյան), խաչքար (13-րդ դ., Ա. Խաչատրյանի հողամասում), խաչքար (13-րդ դ., արևելյան հատվածում, ստորին մասը՝ կոտրված), խաչքար Գրիգոր և Վարդոսան ամուսինների (1225 թ. արևելյան մասում, քառաստիճան պատվանդանին), խաչքար Սադուն իշխանի և նրա զավակների (Ծակքար, 1268 թ.), խաչքար Գրիգորի, Նազի, Սեդայի (1273 թ. եռաստիճան պատվանդանին), խաչքար Վերգինի (1461 թ, կենտրոնական մասում, հենած տապանաքարին, ստորին մասը չի պահպանվել), խաչքար Կարապետին (16-17 դդ, հյուսիսարևմտյան մասում, քիվը՝ ջարդոտված, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին, երեք խաչքարերից ձախակողմյանը), խաչքար Վիրապի, Մկրտչի (16-17 դդ, հյուսիսարևմտյան մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին, երեք խաչքարերից կենտրոնականը), խաչքար Գուլֆաշի, Շնարհի (1602 թ., հյուսիս-արևմտյան մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին, երեք խաչքարերից աջակողմյանը), խաչքար Ուքանի (1631 թ, հարավարևմտյան մասում, քիվի վերին աջ անկյունը կոտրված):

եկեղեցու համակառույցն է: Այն դուրս է Աշտարակ քաղաքի հիմնական տարածքից և չի ընդգրկվում ներկայացվող ուսումնասիրության ծիրում:

Աշտարակ քաղաքի հուշարձանների տարածքը, ճանապարհային հարմարավետության առումով, հարկավոր է կազմակերպել՝ ելնելով Երևանի և Էջմիածնի մայրուղիներին հասնող պողոտաների մատչելիությունից: Այսպես, քաղաքի հուշարձանների տարածքները, դիզայներական ձևավորման առումով, կարելի է գոտևորել Քասաղի կամրջից սկսվող հետևյալ տարածքներով՝

1. Վերին Նավերի տարածքը՝ հարակից հուշարձաններով.
2. «Խոջաբաղեր» դամբարանադաշտը՝ հարակից հնձաններով.
3. Ուրարտական ջրանցքն ու նրանից ոչ հեռու գտնվող միջնադարյան քարայրների տարածքը.
4. Ուլատիտիկ բնակավայրը և տարածքը.
5. Աշտարակի կորիզը (տես գծ.2), որ ընդգրկում է՝

ա) քաղաքային զբոսայգին, Աշտարակի հրապարակը և դրա շրջակա Հին Աշտարակի հուշարձանները: Այստեղ առանձին գոտիով հարկավոր է կազմակերպել Աշտարակի նոր շրջանի ժողովրդական բնակելի տների համալիրը և այլ հուշարձանները.

բ) ազգագրական հատկանիշներով շահեկան միասնական ձևավորման տարածք է Ս. Կարմրավոր եկեղեցին՝ իր շրջակայքով, կամրջի և Բերդաթաղի հուշարձաններով ագլոմերացիան (տես գծ. 3).

գ) հին գերեզմանի տարածքը կազմակերպել տեղում գործող կառույցի հարակցությամբ: Նույնը պետք է իրականացնել եկեղեցիների հարակցությամբ եղած մեմորիալ հուշարձանների և հոգևոր ենթակառույցների կապակցությամբ:

- **Փաստորեն, ի հավելումն Աշտարակի հուշարձանների ցանկի, քաղաքի կորիզի հուշարձանների թվին ավելացվում են Աշտարակի հրապարակը և քաղաքային այգին:**
- **Աշտարակի նշված հուշարձանների և հուշարձանախմբերի տարածքային կազմակերպումը կկատարվի միջավայրային դիզայնի սկզբունքներով: Այդ կապակցությամբ հայեցակարգային տարրեր են՝**

1. քաղաքի հուշարձանների ընդհանուր մատչելիության համակարգի ստեղծումը.
2. յուրաքանչյուր հուշարձանի տարածքի ֆունկցիոնալ վերլուծությունը և էրգոնոմիկայի խնդիրները

3. Յուրաքանչյուր հուշարձանախմբի և առանձին հուշարձանի տարածքի՝

ա) հորինվածքային վերլուծությունը

բ) գրաֆիկական կոմունիկացիան կամ հաղորդակցման միջոցները

գ) առարկայական միջավայրի տարրերի կազմակերպումը

SUMMARY

The Zoning of the Historical-Cultural Monuments of Ashtarak City and its Organization Concept

Ruben Voskanian
SAFAA PhD

Ashtarak is one of the important historical settlements in Republic of Armenia. The protection and site organization of the monument have principal indication for the future development of the city. Thus according to the official catalogue, the site of the monuments are fixed and grouped on the master plan in an optimal way, as a derivative of site organization principles of environment design.

Keywords. *Ashtarak, monument, church, zoning, organize*

РЕЗЮМЕ

Зонирование историко-культурных памятников город Аштарак и концепция организации

Рубен Восканян
ГАХА аспирант

Аштарак является одним из самых важных исторических мест в Республике Армения. Сохранение памятников и организация их окружающей среды имеют решающее значение для развития города. Согласно мемориальному списку, памятники были возведены по генеральному плану, они сгруппированы и оптимально отсортированы на основе концепции дизайна.

Ключевые слова. *Аштарак, памятник, церковь, зонирование, организация.*



1

1. Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագիծը և հուշարձանների տարածքների պատմական գոտիները:

1) Վերին Նավերի փարածքը՝ հարակից հուշարձաններով:
2) «Խոջաբաղեր» դամբարանադաշտը՝ հարակից հնձաններով:
3) Ուրարտական ջրանցքն ու նրանից ոչ հեռու գտնվող միջնադարյան քարայրերի փարածքը:
4) Ուլափիտիկ բնակավայրը և փարածքը:
5) Աշտարակի կորիզը:



2

2. Աշտարակի կորիզի հուշարձանները:

3

3. Բերդաթաղը իր շրջակա հուշարձաններով: